Հաշվետվություն

2019 թվականի հուլիսի 7-ից 12-ը Ամերիկայի Միացյալ Նահանգներ (Սան Դիեգո) կատարած գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը.**
   Սարհատ Պետրոսյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**
   ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի ղեկավար

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Ամերիկայի Միացյալ Նահանգներ, Սան Դիեգո, 2019 թվականի հուլիսի 7-ից 12-ը:

4. **Հրավիրող կողմը.**
   Երկրատեղեկատվական համակարգերի (ԵՏՀ/GIS) ծրագրային ապահովման, երկրատարածական տվյալների կառավարման հենքերի միջազգային մատակարար «Esri» ընկերություն (Environmental Systems Research Institute):

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**
   Մասնակցություն «Esri» օգտատերերի համաժողովի շրջանակներում անցկացվող Ազգային կառավարությունների գործադիր ֆորումին:
   Ինտեգրված կադաստրի ստեղծման շրջանակներում անհրաժեշտ ծրագրային ապահովման աջակցություն և համատեղ աշխատանքների ճանապարհային քարտեզի քննարկում:

6. **Քննարկված թեմաները.**
   Քննարկվեցին օրակարգով նախատեսված հետևյալ հարցերը.
   - Պետական և տեղական կառավարման նոր միտումներ. կառավարությունների՝ նոր սերնդի թվային ծառայություններ,
   - ԵՏՀ-ից առավելագույն արդյունքներ ստանալը, խելացի համայանքների ռազմավարության զարգացում,
   - Տեղեկատվական անվտանգության քաղաքականության մշակումը և ապահովումը ArcGIS շրջանակում,

- Խելացի համայնքներ. քաղաքացիների ներգրավվածության խթանում,
- Գնահատման ընթացակարգերը ArcGIS շրջանակում,
- ArcGIS լուծումները տեղական և պետական կառավարման համար,
- Երկրատարածական ռազմավարություն,
- ArcGIS հավելվածներ,
- ArcGIS երկրատարածական ամպի կիրառում,
- Թվային փոխակերպումը հողերի հաշվառման ոլորտում ներդնելու մասին:

7. **Հանդիպումներ, ելույթներ, բարձրացված կամ քննարկված հարցեր.**
«Esri» Ազգային կառավարությունների գործադիր ֆորումին ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) պատվիրակության կազմում է եղել նաև ղեկավարի տեղակալ Լևոն Մելիքյանը:
Ըստ նախնական պայմանավորվածության՝ կայացել է ղեկավարի հանդիպումը «Esri» հիմնադիր նախագահ Ջեք Դենջերմոնդի հետ:
Հանդիպումներ են տեղի ունեցել նաև Կիպրոսի Հանրապետության կադաստրի ներկայացուցիչների, ԱՄՆ վիճակագրական բյուրոյի ներկայացուցիչների հետ:

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**
«Esri» հիմնադիր նախագահ Ջեք Դենջերմոնդի հետ հանդիպմանը, որին մասնակցում էին Կարստեն Բյորնսոնը և Մարկ Ուիլյամսը, քննարկվել են «Esri»-ի ծրագրային փաթեթների կիրառման հնարավորությունները Ինտեգրված կադաստրի ստեղծման գործում, ինչպես նաև դրա այլ մանրամասները: Հատկապես կարևորվել են փուլային տարբերակով ամբողջական համակարգի կայացման, ինչպես նաև կադրերի վերապատրաստման անհրաժեշտությունը:
Հանդիպման վերջում պայմանավորվածություն ձեռք բերվեց, որ «Esri»-ն Կոմիտեին անվճար կտարմադրի ծրագրային փաթեթ, խորհրդատվություն և վերապատրաստում: Այն կամրագրվի փոխըմբռնման հուշագրով, որը նախատեսվում է ստորագրել սեպտեմբեր ամսին:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները.**
Փոխըմբռնման հուշագրի վերաբերյալ բանակցությունները կսկսվեն առաջիկա երկու շաբաթների ընթացքում:

10. **Ստորագրությունը, ամսաթիվը:**

Սարհատ Պետրոսյան 16.07.2019 թ.